

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. նոյեմբերի 21-ի

նիստի /արձանագրություն N 6/

1. ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում ՀՀ կառավարության ծրագիրն ընդունելի գիտություն և ի դեկավարումն,

1.2 ԵԹԿՊԻ-ի ստեղծագործական տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի (ՍՏՈԻԿ պրոդաքշն) ներդրումային զարգացման ծրագիր կազմելու նպատակով ստեղծել աշխատանքային հանձնախումբ հետևյալ կազմով`

-Ավանեսյան Վարուժան (ՄՀԼԼՇԿ-ի ղեկավար)

-Երզինկյան Աննա (Կինոյի, հեռուստ. և անիմացիայի ֆակուլտետի ղեկան)

-Մանասերյան Էլեն (իրավախորհրդատու)

-Իսրայելյան Հասմիկ (ՈԱԿ-ի ղեկավար)

-Մարե-Գասպարյան Նունե (գլխավոր հաշվապահի տեղակալ)

-Պատրիկ Իգոր (դասախոս)

-Սարգսյան Արմեն (ՈւԽ նախագահ)

1.2.1. սույն որոշման 1.2 կետում նշված ներդրումային զարգացման ծրագիրը կազմելու և ներկայացնելու համար սահմանել մեկշաբաթյա ժամկետ: Ծրագրի պատասխանատու նշանակել Վ. Ավանեսյանին:

2. ԵԹԿՊԻ-ում հիմնել արտակարգ իրավիճակների շտաբ: Շտաբի ղեկավար նշանակել պրոռեկտոր Հովհաննես Ավագյանին,

2.1 հանձնարարել Հ. Ավագյանին մեկշաբաթյա ժամկետում ձևավորել շտաբի անձնակազմը:

3. . ԵԹԿՊԻ-ի 2017թ. բյուջեի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին Վ. Եղիազարյանի զեկույցն ընդունելի գիտություն:

3.1 2017թ. ընդունելությանը դիմորդներ հավաքագրելու նպատակով հանձնարարել`

3.1.1 . ԵԹԿՊԻ-ի կարիերայի կենտրոնին` 2017թ. փետրվար ամսից պարբերաբար այցելություններ կատարել հանրակրթական կրթօջախներ` ծանոթացնել ինստիտուտում ուսուցանվող մասնագիտություններին,

3.1.2 Թատրոնի ֆակուլտետի դեկան Է. Հեքեքյանին՝ կազմել և Կարիերայի կենտրոնին տրամադրել դպրոցներ այցելող դասախոսների անվանացանկը,

3.1.3 Ուսումնական թատրոնի տնօրեն Է. Բարսեղյանին՝ ներկայացնել գրավոր առաջարկ ուս. թատրոնին կից մանկապատանեկան ստուդիա բացելու վերաբերյալ,

3.1.4 թատրոնի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը հրավիրել նաև դպրոցներից:

4. Հիմք ընդունել ՀՀ ԿԳՆ 11.11.2016թ. թիվ 01/06/14456-16 գրությունը և թույլատրել փոխատեղման մրցույթի արդյունքում մագիստրատուրայում առկա անվճար ուսուցման մեկ թափուր տեղը վերաբաշխել,

4.1 հաշվի առնելով 2015-2016 ուս. տարում ցուցաբերած առավել բարձր առաջադիմությունը, մագիստրատուրայում առկա անվճար ուսուցման առանց տարկետման իրավունքի մեկ տեղը հատկացնել Պարարվեստի ռեժիսուրա մասնագիտության մագիստրատուրայի II կուրսի ուսանողուհի Անի Արտաշեսի Ահարոնյանին և ս.թ. սեպտեմբերի 1-ից նշանակել կրթաթոշակ:

5. Հավանություն տալ արվեստի բուհերի շաբաթի ծրագրին,

5.1 արվեստի բուհերի շաբաթվա ընթացքում կազմակերպված միջոցառումները նկարահանելու նպատակով հանձնարարել Ա. Երզինկյանին տրամադրել օպերատորական կուրսերից երկու ուսանող,

5.2 արվեստի բուհերի շաբաթվա գովազդային պաստառները պատրաստելու համար հատկացնել անհրաժեշտ գումար:

6. Հանձնարարել Վ. Եղիազարյանին կազմակերպել լսարանների վրա համապատասխան ցուցանակների տեղադրումը:

7. Ծննդյան 80-ամյակի կապակցությամբ ինստիտուտի պրոֆեսոր Արմեն Բուդաղյանին պարգևատրել պատվոգրով:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան